**«Ավարտական փաստաթղթերի դիտում»**
**մեթոդական ուղեցույց**

1. Ավարտական փաստաղթեր դիտելու համար անհրաժեշտ է մուտք գործել Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային ծառայությունների մատուցման հարթակ: Ավարտական փաստաթղթերն էլեկտրոնային ծառայությունների մատուցման հարթակի միջոցով հնարավոր է դիտել 3 տարբերակներով.




**Տարբերակ 1.** Անհրաժեշտ է մուտք գործել «Փաստաթղթերի դիտում» բաժին: Եթե ունեք փաստաթղթի համարն ու գաղտնաբառը, ապա անհրաժեշտ է

դրանք լրացնել «Ավարտական փաստաթղթերի դիտում» բաժնի համապատասխան տողերում և սեղմել «Որոնել» կոճակը:




**Տարբերակ 2.** Անհրաժեշտ է մուտք գործել հարթակի «[Դիմումի ընթացք](#)» բաժին և համապատասխան տողերում լրացնել դիմումի մուտքագրման բանալին և գաղտնաբառը, որոնք նշված են Ձեր կողմից Կադաստրի կոմիտեի որևէ սպասարկման գրասենյակում կամ հարթակի միջոցով ներկայացված դիմումի մուտքագրման վերաբերյալ Ձեզ տրամադրված ստացականի համապատասխան տողերում:




**Տարբերակ 3.** Եթե դիմումը ներկայացրել եք հարթակի միջոցով, ապա ավարտական փաստաթուղթը կարող եք տեսնել մուտք գործելով հարթակի «[Դիմումների ցանկ](#)» բաժին, «Որոնել» տողում մուտքագրելով Ձեր դիմումի մուտքագրման օրը, ամիսը, տարեթիվը և սեղմել «Ցուցադրել» կոճակը: Դիմումի պատասխանը պատրաստ լինելու դեպքում կից ներկայացված




փաստաթղթերի փաթեթի ցանկում կավելանա «Ավարտական փաստաթուղթ» տողը, որն ընտրելով կարող եք ծանոթանալ դրան և ըստ անհրաժեշտության տպել այն:

